



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
CENTRE FOR POLICY STUDIES



# Վիշեգրադյան քառյակի փորձի կիրառումը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար

Ծրագիրն իրականացվում է գործընկերների մասնակցությամբ.

Res Publica հիմնադրամ / Visegrad Insight (Լեհաստան)

Ցագելոնյան ակումբ (Լեհաստան)

Բուդապեշտի հանրային քաղաքականության վերլուծությունների ինստիտուտ (Հունգարիա)

«EUROPEUM» եվրոպական քաղաքականության ինստիտուտ (Չեխիա)

EURACTIV Սլովակիա



*Արևեն Գրիգորյան*

Արևելյան Գործընկերություն.  
Վիշեգրադյան քառյակի երկրների  
քաղաքականությունը

Սույն հրատարակումը լույս է տեսնում Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից լեհ, հունգարացի, չեխ և սլովակ փորձագետների հետ համագործակցությամբ իրականացվող «Վիշեգրայան քառյակի փորձի կիրառումը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար» ծրագրի շրջանակում:

*Ծրագիրը ֆինանսավորվում է Լեհաստանի, Հունգարիայի, Չեխիայի և Սլովակիայի կառավարությունների կողմից՝ Միջազգային Վիշեգրայան հիմնադրամի միջոցով, որի նպատակը Կենտրոնական Եվրոպայում հարատև տարածաշրջանային համագործակցության առաջխաղացումն է:*

This paper is published within the Advancing Reforms in Armenia with Visegrad Four's Know-how project framework.

*The project is co-financed by the Governments of Czechia, Hungary, Poland and Slovakia through Visegrad Grants from International Visegrad Fund. The mission of the fund is to advance ideas for sustainable regional cooperation in Central Europe.*

Grant #22010376

Additional information: <https://centreforpolycystudies.org/en/Visegrad>

Հոդվածաշարի խմբագիրներ՝ Արմեն Գրիգորյան, Տաթևիկ Ղազարյան  
Series editors: **Armen Grigoryan, Tatevik Ghazaryan**

© Քաղաքականության հետազոտական կենտրոն / Centre for Policy Studies  
© Միջազգային Վիշեգրայան հիմնադրամ / International Visegrad Fund

Երևան, սեպտեմբեր 2020  
Yerevan, September 2020

«Վիշեգրադյան քառյակի փորձի կիրառումը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար» ծրագրի նպատակը Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով առաջնահերթություն համարվող որոշ ոլորտներում բարեփոխումներին նպաստելն է:

Ծրագրի ընթացքում պլանավորված է անդրադառնալ հինգ թեմաների.

- Վիշեգրադյան քառյակի երկրների քաղաքականությունը,
- քաղաքացիական անվտանգության ոլորտի բարեփոխում,
- առողջապահություն և սոցիալական քաղաքականություն,
- այլընտրանքային էներգետիկայի զարգացում,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կառավարում և տեղեկատվական հասարակություն:

Հուլիսին կազմակերպվել է չորս առցանց սեմինար Վիշեգրադյան քառյակի երկրների քաղաքականության վերաբերյալ: Զեկույցներով հանդես են եկել Լեհաստանում Res Publica հիմնադրամի կողմից հրատարակվող «Visegrad Insight» հանդեսի գլխավոր խմբագիր Վոյչեխ Պշիբիլսկին, Պրահայի «EUROPEUM» եվրոպական քաղաքականության ինստիտուտի փորձագետ Վերա Ժիհաչկովա-Պախտան, Սլովակիայի արտաքին քաղաքականության ասոցիացիայի ավագ փորձագետ Ալեքսանդր Դուլերան և Ռոբերտ Բոշի անվան Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի, Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի կենտրոնի ավագ փորձագետ Անդրաշ Ռացը՝ ներկայացնելով Լեհաստանի, Չեխիայի, Սլովակիայի և Հունգարիայի վարած քաղաքականության վերաբերյալ իրենց տեսակետներն, ինչպես նաև որոշ այլ տեղեկություններ՝ Արևելյան Գործընկերության (ԱԳ) ընդհանուր համատեքստում:<sup>i</sup> Քաղաքականության հետազոտական կենտրոնի փոխնախագահ, ծրագրի համակարգող Արմեն Գրիգորյանի «Արևելյան Գործընկերություն. Վիշեգրադյան քառյակի երկրների քաղաքականությունը» հոդվածն ամփոփում է ծրագրի առաջին փուլի սեմինարները և թեմային առնչվող որոշ այլ տեղեկություններ:

Սեպտեմբերից հաջորդ տարվա փետրվար ընկած ժամանակահատվածում նախատեսված է կազմակերպել նմանատիպ սեմինարներ և փորձագիտական քննարկումներ ծրագրում ներառված մյուս չորս թեմաներով: Նախատեսված է նաև հրապարակել յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ տեղի ունեցած քննարկումների արդյունքները և այլ տեղեկություններ ամփոփող հոդվածներ: Ոլորտային բարեփոխումներին նվիրված հոդվածներում տեղ կգտնեն նաև քաղաքականության առաջարկներ:

Սեմինարներում փորձագետների զեկույցները և սույն հրապարակումը չեն արտահայտում Միջազգային Վիշեգրադյան հիմնադրամի կամ որևէ այլ կառույցի տեսակետը:

*This article by vice president of the Centre for Policy Studies Armen Grigoryan summarises the findings of four webinars organised within the programme framework in July 2020, covering Visegrad Four countries' policies regarding Eastern Partnership. Opinions expressed in the experts' presentations and in this paper do not represent those of the International Visegrad Fund or any public or private institution.*

---

<sup>i</sup> Սեմինարների տեսագրություններն ու ծրագրին առնչվող այլ նյութեր հասանելի են <https://centreforpolycystudies.org/Visegrad> կայքում:

## Արմեն Գրիգորյան

### Արևելյան Գործընկերություն. Վիշեգրադյան քառյակի երկրների քաղաքականությունը

Վիշեգրադյան քառյակի երկրների մոտեցումներն ԱլԳ տարբեր առումների վերաբերյալ միշտ չէ, որ համընկել են: Լեհաստանը, լինելով ԱլԳ ձևաչափի ստեղծման նախաձեռնողներից մեկը, առավել հետևողական է գտնվել ԱլԳ-ն ուշադրության կենտրոնում պահելու ջանքերի առումով, մինչդեռ օրինակ Հունգարիան ու Սլովակիան առավել կարևորել են իրենց անմիջական հարևան Ուկրաինայի հետ հարաբերությունները: Բացի այդ, երբեմն նույնիսկ հնչել են տեսակետներ, որ Լեհաստանը որոշ չափով ցուցաբերում է «աշխարհաքաղաքական» մոտեցում, մինչդեռ մյուսներն ավելի պրագմատիկ են՝ մասնավորապես Ռուսաստանի հետ հարաբերությունները հաշվի առնելով:

Մինևույն ժամանակ, Վիշեգրադյան քառյակի երկրների կառավարական և փորձագիտական շրջանակները դեռևս տարիներ առաջ պատրաստակամ են գտնվել իրենց երկրների փորձը հաշվի առնող բարեփոխումների հնարավորությունները քննարկել ԱլԳ՝ մասնավորապես Հարավային Կովկասի գործընկերների հետ: Սա մասամբ վերաբերվում է նաև ներկայումս արդեն Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով առաջնահերթություն համարվող որոշ ոլորտներին:<sup>1</sup>

### *Հայացք Լեհաստանից*

2019 թ. մարտին լույս տեսած «Արևելյան գործընկերության հեռանկարը 2020-ից հետո» զեկույցում Լեհաստանի Միջազգային գործերի ինստիտուտի փորձագետները բավական հստակորեն նշել են Լեհաստանի ու ԵՄ որոշ այլ անդամների մոտեցումների տարբերությունը: Մասնավորապես, որպես ԵՄ անդամ երկրների կառավարությունների ղեկավարների վեհաժողովի՝ Եվրոպական խորհրդի մակարդակով ԱլԳ զարգացմանը խոչընդոտող գործոն հիշատակվում է ձևաչափի նկատմամբ մի շարք երկրներում՝ Ավստրիայում, Բենիլյուքսի երկրներում, Իտալիայում և Ֆրանսիայում առկա դժկամությունը՝ պայմանավորված ԵՄ-ի հնարավոր հետագա ընդլայնման նկատմամբ բացասական վերաբերմունքով կամ առավելապես ոչ թե արևելյան, այլ հարավային հարևանների հետ հարաբերությունների ընդլայնմամբ հետաքրքրված լինելով: Այդ երկրներից ամենաազդեցիկի՝ Ֆրանսիայի դիրքորոշմամբ են մեծապես պայմանավորված ԱլԳ զարգացման որոշ սահմանափակումներ: Նախ և առաջ, Ֆրանսիան ընդդիմանում է ԱլԳ երկրների ԵՄ հետագա անդամակցության

<sup>1</sup> St' u, op' h' n' aly, Majer, Marian (ed). *Security Sector Reform in Countries of Visegrad and Southern Caucasus: Challenges and Opportunities*. Bratislava: Centre for European and North Atlantic Affairs, 2013 և Padrtová, Barbora (ed). *Security Sector Reform Action Plans for the South Caucasus Countries*. Bratislava: Centre for European and North Atlantic Affairs, 2014:

հեռանկարին: Այն նաև չի հանդիսանում մուտքի արտոնագրերի հետագա ազատականացման կողմնակից. մասնավորապես, Հայաստանի պարագայում Ֆրանսիայում հայկական մեծ համայնքի առկայությունը մուտքի պայմանների ազատականացման համատեքստում համարվում է ներգաղթի աճի հնարավոր խթան: Սակայն ընդդիմանալով ԱլԳ երկրների հետ անվտանգության ոլորտում համագործակցության ընդլայնմանը՝ մասնավորապես Ռուսաստանի հետ հարաբերությունների պատճառով, Ֆրանսիան միաժամանակ նաև հաշվի է առնում կիբեռհարձակումների վտանգավորությունը՝ ըստ այդմ օժանդակելով ապատեղեկատվության տարածման դեմ ուղղված ԵՄ քաղաքականությանը:<sup>2</sup>

Ըստ լեհ փորձագետների, ԱլԳ-ն առաջնահերթություն չէ նաև Գերմանիայի համար: Վերջինս դիվանագիտական ներկայացուցչություններ ու այլ կառույցներ ունի ԱլԳ բոլոր երկրներում և բավարար ազդեցություն ունի երկկողմ հարաբերությունների մակարդակով՝ ինչով մասնակիորեն պայմանավորված է լրացուցիչ ձևաչափերի նկատմամբ հետաքրքրության պակասը: Գերմանիան նույնպես դեմ է ԱլԳ երկրների հնարավոր անդամակցության միջոցով ԵՄ-ի հետագա ընդլայնմանը, ինչպես նաև դեմ է անվտանգության ոլորտում (բացի քաղաքացիականից) համագործակցության ընդլայնմանը՝ այն համարելով սպառնալիք Ռուսաստանի հետ իր հարաբերությունների համար: Միևնույն ժամանակ, Գերմանիան օժանդակում է ԱլԳ երկրների Ռուսաստանից ունեցած տնտեսական կախվածությունը նվազեցնելուն նպատակաուղղված գործողություններին՝ հիմնականում նախընտրելով քաղաքացիական հասարակության հետ համագործակցության և ԱլԳ երկրների պետական ինստիտուտների զարգացմանը նպատակաուղղված միջոցների կիրառումը:<sup>3</sup>

Անդրադառնալով Հայաստանին, Լեհաստանի Միջազգային գործերի ինստիտուտի զեկույցը մասնավորապես հիշատակում է ԵՄ-ի կողմից ներդրումների և ֆինանսական օժանդակության ավելացման անհրաժեշտությունը՝ այդ թվում երկարաժամկետ ենթակառուցվածքային և այլ ծրագրերի իրականացման համար: Ընդգծված է նաև քաղաքացիական հասարակության մակարդակով համագործակցության հետագա զարգացման անհրաժեշտությունը, սակայն հատուկ ընդգծվում է, որ զեկույցի հրապարակմանը նախորդած ժամանակահատվածում եվրոպական ֆինանսավորումը հաճախակի բաժին էր հասել նաև հակաեվրոպական ու պրոեվրասիական կառույցներին:<sup>4</sup>

Իրենց հերթին, լեհական Res Publica հիմնադրամի նախաձեռնությամբ Վիշեգրադյան քառյակի ու ԱլԳ երկրներից փորձագետների կողմից 2019 թ. նոյեմբերին հրապարակված «Արևելյան Գործընկերություն-2030. միտումներ» զեկույցի հեղինակները զգուշացնում են, որ մինչդեռ ԱլԳ ձևաչափի ստեղծմանը հետևած առաջին տասնամյակում մասնակից երկրներին առաջարկվել էին նոր

<sup>2</sup> Kaca, Elzbieta (ed.) *The Eastern Partnership Vision after 2020*. Warsaw: Polish Institute of International Affairs, 2019, էջ 34:

<sup>3</sup> Kaca, Elzbieta, նշվ. աշխ., էջ 34-35:

<sup>4</sup> Kaca, Elzbieta, նշվ. աշխ., էջ 27:

խթաններ, ինչպիսիք են ասոցացման պայմանագրերը, ԵՄ շուկա մուտքի հնարավորությունը և վիզաների ազատականացումը, ապագայում նոր հրապուրիչ խթանների բացակայության դեպքում ԵՄ-ի որոշ անդամների և միասնական կառույցների հետաքրքրվածության պակասը կարող է «վարակիչ» դառնալ նաև ԱլԳ երկրների քաղաքացիների համար, հատկապես եթե ԵՄ-ն հանդես գա ոչ թե գործընկերոջ, այլ «ուսուցչի» դերում:<sup>5</sup> Մինևույն ժամանակ, հաշվի առնելով տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական միտումները, Ռուսաստանի տնտեսության շարունակական անկումը նպաստելու է ԱլԳ երկրներից ԵՄ աշխատուժի ներգաղթին:<sup>6</sup>

Ս.թ. մարտին հրապարակված մեկ այլ գեկույցում, որը նաև ներկայացվել է «Վիշեգրադյան քառյակի փորձը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար» ծրագրի շրջանակում հուլիսի 3-ին անցկացված սեմինարի ընթացքում,<sup>7</sup> նշված է առաջիկա տասնամյակում հավանական զարգացումների չորս սցենար՝ կապված հետևյալ առանցքային իրադարձությունների հետ. ԱլԳ երկրների ԵՄ-ի հետ ինտեգրման խորացում, ռուսական հեգեմոնիայի վերականգնում, ԵՄ-Ռուսաստան գործարք և ԱլԳ երկրների զարգացում՝ քաղաքացիական հասարակության ուժեղացման շնորհիվ: Նշված սցենարները նպատակաուղղված են որոշ ընդհանուր միտումների վերլուծությանը՝ հաշվի առնելով տարածաշրջանային ու գլոբալ միտումները, այդ թվում՝ ԱլԳ երկրներում առկա իրավիճակը, Ռուսաստանի և ԵՄ-ի քաղաքականությունը, ԱՄՆ-ի և Չինաստանի ազդեցությունը, տեխնոլոգիական, սոցիալական, ժողովրդագրական և այլ փոփոխությունները:

«Պրագմատիկ ինտեգրում» սցենարը ենթադրում է, որ ապաժողովրդավարացման կամ անվտանգության ապահովման հետ կապված ցնցումների բացակայության պայմաններում ԱլԳ երկրների մեծամասնությունը կկարողանա արդյունավետորեն զարգացնել քաղաքական, տեխնիկական և տնտեսական համագործակցությունը ԵՄ-ի հետ՝ հենվելով վերջինիս հրապուրիչ «փափուկ ուժի» վրա:<sup>8</sup>

Ռուսական հեգեմոնիայի վերականգնման սցենարի հիմքում նավթի բարձր պահանջարկի պահպանումն է: Այդ դեպքում, չնայած արևմտյան պատժամիջոցների պահպանմանը, Ռուսաստանը որոշ չափով կարող է հաջողել տնտեսական ու հատկապես ռազմական արդիականացման առումով և տարբեր միջոցներով՝ անգամ ուժի կիրառմամբ և նոր հակամարտություններ հրահրելով, վերահսկողություն հաստատել հարևան երկրների նկատմամբ: Միաժամանակ տարածաշրջանում կաճի նաև Չինաստանի և Թուրքիայի ազդեցությունը:<sup>9</sup>

<sup>5</sup> Przybylski, Wojciech and Quincy Cloet (eds.) *Eastern Partnership 2030 Trends*. Warsaw: Res Publica Foundation, 2019, էջ 7:

<sup>6</sup> Przybylski, Wojciech and Quincy Cloet, նշվ. աշխ., էջ 15:

<sup>7</sup> «Արևելյան գործընկերություն. հայացք Լեհաստանից» սեմինար, 3 հուլիսի 2020թ., <https://www.youtube.com/watch?v=vkGnCLHkiIk>:

<sup>8</sup> Przybylski, Wojciech and Joerg Forbrig (eds.) *Scenarios for the Eastern Partnership 2030*. Warsaw: Res Publica Foundation, 2020, էջ 8-9:

<sup>9</sup> Przybylski, Wojciech and Joerg Forbrig, նշվ. աշխ., էջ 10-11:

Իր հերթին, «ԵՄ-ի շրջադարձ դեպի Ռուսաստան» սցենարը ենթադրում է, որ տրանսատլանտյան համագործակցության շարունակական թուլացման և չինական էքսպանսիայի պայմաններում տնտեսական և անվտանգության ապահովման հետ կապված ռիսկերը ԵՄ-ին կարող են դրդել համագործակցության Ռուսաստանի հետ՝ չնայած վերջինիս ագրեսիվ քաղաքականությանն ու միջազգային իրավունքն արհամարհելուն: Ռուսաստանի հետ տնտեսական համագործակցությունն առաջնահերթություն համարելն ի վերջո կարող է հանգեցնել ժողովրդավարության նահանջի՝ թե ԵՄ անդամ երկրներում, թե ԱլԳ երկրներում:<sup>10</sup>

Վերջապես, չորրորդ սցենարով ԵՄ-ի ու առհասարակ Արևմուտքի կողմից հետաքրքրության պակասի պայմաններում ԱլԳ երկրների քաղաքացիական հասարակությունները, գիտակցելով նաև ռուսական մոդելի անհեռանկարային լինելը, ստանձնում են առաջնորդող ուժի դերը՝ անհրաժեշտության դեպքում զանգվածային բողոքի ցույցերի միջոցով: Այս դեպքում զարգացման հիմքում պետք է լինի արդիականացման, կրթական ու տնտեսական նոր հնարավորությունների ապահովման պահանջը:<sup>11</sup>

Առավել դրական սցենարների հնարավոր իրականացման և բացասական զարգացումներից խուսափելու նպատակով զեկույցի հեղինակների առաջարկությունները մասնավորապես ներառում են ԱլԳ երկրների միմյանց միջև և ԵՄ-ի հետ կապերի ընդլայնումը, ԵՄ-ի անմիջական համագործակցությունը ԱլԳ երկրների քաղաքացիական հասարակությունների հետ, թվային տեխնոլոգիաների և գիտական համագործակցության զարգացումը, ինչպես նաև տարածաշրջանի մակարդակով ինովացիաների խրախուսումը:<sup>12</sup>

## ***Հայացք Չեխիայից***

Ամփոփելով ծրագրի շրջանակում հուլիսի 13-ին անցկացված սեմինարում Վերա Ժիհաչկովա-Պախտայի արտահայտած տեսակետները,<sup>13</sup> կարելի է նշել, որ Չեխիայի համար ԱլԳ-ն շարունակում է մնալ արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը՝ հիմնված արժեքային համակարգի ու տնտեսական շահերը հաշվի առնելու վրա: Չեխիան հանդես է եկել ԱլԳ երկրների դիմակայունության ուժեղացմանը նպատակաուղղված քաղաքականության մշակման նախաձեռնությամբ, որն արժանացել է ԵՄ-ի մի շարք այլ անդամների հավանությանը ևս, և ի վերջո ընդունվել է նաև Եվրոպական հանձնաժողովի կողմից:<sup>14</sup> Դիմակայունության ուժեղացման խնդրին սեմինարի բացման ժամանակ

<sup>10</sup> Przybylski, Wojciech and Joerg Forbrig, նշվ. աշխ., էջ 12-13:

<sup>11</sup> Przybylski, Wojciech and Joerg Forbrig, նշվ. աշխ., էջ 14-15:

<sup>12</sup> Przybylski, Wojciech and Joerg Forbrig, նշվ. աշխ., էջ 3:

<sup>13</sup> «Արևելյան գործընկերություն. հայացք Չեխիայից» սեմինար, 13 հուլիսի 2020 թ., <https://www.youtube.com/watch?v=menrwJHE5ig>:

<sup>14</sup> Sté u, օրինակ, Joint Communication: Eastern Partnership policy beyond 2020: Reinforcing Resilience – an Eastern Partnership that delivers for all, 18 մարտի 2020թ.,



անդրադարձել էր նաև Հայաստանում Չեխիայի փոխդեսպան Յան Պլեշինգերը՝ մասնավորապես նշելով. «Դիմակայունությունը ժողովրդավարական, տնտեսական և հասարակական, ինչպես նաև անվտանգային, բնապահպանական և հումանիտար տարրեր ներառող ընդհանուր գաղափարից պետք է վերածվի անհրաժեշտ ռեսուրսներով ապահովված պրակտիկ գործողությունների՝ հանուն գործընկերների շահերի և Եվրոպայի հարևան տարածաշրջանների կայունության: Տեղեկատվական անվտանգության ապահովման և ապատեղեկատվության դեմ պայքարելու համար անհրաժեշտություններ են անկախ լրատվամիջոցները, արհեստավարժ լրագրությունը և մեդիագրագիտությունը: Հիբրիդային սպառնալիքների, այդ թվում՝ կիբեռնարձակումների դեմ պայքարելու համար, պահանջվում է համագործակցություն՝ դիմակայունության ամրապնդմանն ուղղված միջոցներով»:<sup>15</sup>

Այսքանով հանդերձ, ըստ Վ.Ժիհաչկովա-Պախտայի, Չեխիան լիովին բավարարված չէ ԵՄ-ի վարած քաղաքականությամբ՝ մասնավորապես ԵՄ-ի և ԱլԳ երկրների միջև քաղաքական մակարդակով համագործակցության զարգացման թույլ հեռանկարի պատճառով: Չեխիան շարունակում է կողմ լինել Եվրոպական ինտեգրումը խորացնելու ցանկությունն արտահայտող ԱլԳ երկրներին նման հնարավորություն տալուն, ինչպես նաև չի սատարում Եվրանեսթի Խորհրդարանական վեհաժողովի համանախագահ Անդրիուս Կուբիլիուսի առաջարկած «եռյակի» ձևաչափին, որով առաջնահերթություն է համարվում Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի հետ համագործակցությունը, մինչդեռ ԱլԳ մյուս երկրների համար նույն մակարդակով համագործակցության հնարավորություն չի նախատեսվում (այս համատեքստում կարելի է նշել, որ 2019թ. դեկտեմբերին Եվրանեսթի ԽՎ ընդունած հռչակագրով նախապատվությունը տրվել է «եռյակ գումարած» մոտեցմանը, որով հաշվի է առնվել Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով ընձեռված հնարավորությունը, ինչպես նաև 2018 թ. հիբրիդային ռեժիմից դեպի ժողովրդավարություն անցումը – Ա. Գ.):<sup>16</sup>

Որպես 2019-2020 թթ. Վիշեգրադյան քառյակի նախագահող, Չեխիան նույնպես նպաստել է նրան, որ ԱլԳ-ն առաջնահերթություններից մեկը համարվի: Նախատեսված էր նաև կազմակերպել Վիշեգրադյան քառյակի և ԱլԳ երկրների նախարարների համաժողով, որը հետաձգվել է համավարակի պատճառով, բայց կարող է տեղի ունենալ աշնանը: Բացի այդ, 2022 թ. երկրորդ կիսամյակում Չեխիան ստանձնելու է Եվրոպական խորհրդի նախագահությունը և նպատակադրված է այդ ընթացքում ԱլԳ վեհաժողով կազմակերպել:

---

[https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/76166/joint-communication-eastern-partnership-policy-beyond-2020-reinforcing-resilience---eastern\\_en](https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/76166/joint-communication-eastern-partnership-policy-beyond-2020-reinforcing-resilience---eastern_en):

<sup>15</sup> Չեխիայի փոխդեսպան Յան Պլեշինգերի ելույթի հայերեն թարգմանությունն ամբողջությամբ. <https://www.lin.am/2787790.html>:

<sup>16</sup> Euronest Parliamentary Assembly Resolution on the future of the Trio Plus Strategy 2030: building a future of Eastern Partnership, 9 դեկտեմբերի 2019թ., [http://www.epgencms.europarl.europa.eu/cmsdata/upload/439b3edc-e523-4a0e-a9bc-e6c8db51ed75/NEST\\_8th\\_urgency\\_resolution\\_EN.pdf](http://www.epgencms.europarl.europa.eu/cmsdata/upload/439b3edc-e523-4a0e-a9bc-e6c8db51ed75/NEST_8th_urgency_resolution_EN.pdf):

## *Հայացք Մլովակիայից*

Մլովակիայի քաղաքականությունն ուսումնասիրելիս օգտակար է նկատի ունենալ, որ 1993 թ. անկախացած երկրում 1994 թ. աշնանը կայացած ընտրություններից հետո նախկին այլախոհ, 1969 թ. Կոմունիստական կուսակցությունից հեռացված Վլադիմիր Մեչիարի գլխավորած Շարժում հանուն ժողովրդավարական Մլովակիայի կուսակցությունը կռալիցիա կազմեց ձախ և աջ արմատականների՝ Մլովակիայի աշխատավորների միության և ազգայնական, այլատյաց Մլովակիայի ազգային կուսակցության հետ: Արդյունքում ձևավորվել է ավտորիտար վարչակարգ՝ Վ.Մեչիարի առաջնորդությամբ, որի կառավարման հետևանքներից էին թե տնտեսական անարդյունավետությունը, թե հարևան երկրների և եվրոպական ու եվրոատլանտյան կառույցների հետ հարաբերությունների սահմանափակությունը՝ չնայած Վ.Մեչիարի ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին անդամակցելու անհրաժեշտության մասին ձևական հայտարարություններին: Ժողովրդավարական չափանիշներին չհամապատասխանող Մլովակիան 1997 թ. չդարձավ ՆԱՏՕ-ի անդամ Վիշեգրադյան քառյակի մյուս երկրների հետ միասին, սառեցված էր նաև ԵՄ-ին անդամակցելու վերաբերյալ բանակցությունների ընթացքը: Անդամակցության վերաբերյալ բանակցությունները վերսկսվեցին 2000թ.՝ այն բանից հետո, երբ 1998 թ. Վ. Մեչիարի գլխավորած կուսակցությունը, չնայած ստացած ամենաշատ՝ 27% քվեներին, չկարողացավ կազմել կռալիցիա և հինգ ընդդիմադիր կուսակցությունների ձևավորած կառավարությունը՝ Միկուլաշ Չուրինդայի գլխավորությամբ, արագորեն իրականացրեց մի շարք հակակոռուպցիոն գործողություններ, վերացրեց իշխանության թևերի տարանջատման սկզբունքի խախտումները, բարեփոխեց ուժային կառույցները և սկսեց արմատական տնտեսական բարեփոխումներ իրականացնել: Ի վերջո, Մլովակիան 2004թ.՝ Մ.Չուրինդայի պաշտոնավարման երկրորդ ժամկետի ընթացքում (2002-2006 թթ.) անդամակցեց ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին՝ մի շարք այլ նախկին կոմունիստական երկրների հետ միասին:

Հենց այդ համատեքստում են սկիզբ առել եվրոատլանտյան ինտեգրումից հետո ակնկալվող արտաքին քաղաքականության վերաբերյալ քննարկումները, որոնց հուլիսի 22-ին անցկացված սեմինարի<sup>17</sup> սկզբում անդրադարձավ Ալեքսանդր Դուլբեան՝ ԱլԳ նկատմամբ Մլովակիայի դիրքորոշումը ներկայացնելիս: Նա մասնավորապես նշեց, որ 2000-2002 թթ. ընթացքում արդեն իսկ ձևավորվել էր այն մոտեցումը, որ արևմտյան Բալկանների և արևելյան հարևանների (վերջիններիս դեպքում՝ առաջին հերթին Ուկրաինայի) զարգացմանը նպաստելը պետք է լինի Մլովակիայի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Այդ մոտեցումը որդեգրվել է բոլոր կառավարությունների կողմից (այդ թվում 2006-2010 թթ. վարչապետ Ռոբերտ Ֆիցոյի գլխավորած սոցիալ-դեմոկրատների, Շարժում հանուն ժողովրդավարական Մլովակիայի և Մլովակիայի ազգային կուսակցության կռալիցիայի կողմից՝ չնայած ազգայնականության ու ամբոխավարության որոշակի

<sup>17</sup> «Արևելյան գործընկերություն. հայացք Մլովակիայից» սեմինար, 22 հուլիսի 2020թ., <https://www.youtube.com/watch?v=IHZ6vB5MpTQ>:

ուժեղացմանը, ինչի արտահայտություններից մեկը Ռուսաստանի հետ կապերն ի հաշիվ այլ միջազգային համագործակցության զարգացնելու մասին հռետորաբանությունն օգտագործելու ժամանակավոր միտումն էր, որն, ըստ էության, ձևական էր՝ հաշվի առնելով Սլովակիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին – Ա.Գ.):

Թե Վիշեգրադյան քառյակի նախագահության, թե 2016 թ. Եվրոպական խորհրդի նախագահության, թե 2019 թ. ԵԱՀԿ-ի նախագահության ընթացքում Սլովակիան աշխատել է նպաստել ԱլԳ-ի առաջխաղացմանը: Բացի այդ, դեռ մինչ ԱլԳ ձևաչափի ստեղծումը՝ սկսած 2003 թ., Սլովակիայի կառավարության զարգացման պաշտոնական աջակցության ծրագրի միջոցով աջակցություն է տրամադրվել Ուկրաինային և Բելառուսին, իսկ 2009 թ. սկսած՝ Ուկրաինային, Մոլդովային և Վրաստանին, առաջնահերթություն համարելով մասնավորապես կառավարման բարելավումը, ենթակառուցվածքների զարգացումը, քաղաքացիական հասարակության և շուկայական տնտեսության զարգացումը: Պաշտոնական աջակցության ծրագրի միջոցով տրամադրվող տարեկան օգնությունը գերազանցում է 100 մլն. եվրոն: Սկսած 2010-ից, Սլովակիայի կառավարության կազմում նախարարություններից և առընթեր գործակալություններից տասնհինգը ներգրավված են ազգային օրենսդրությունները ԵՄ-ի օրենսդրության դրույթներին համապատասխանեցնելուն և հանրային կառավարման ոլորտը բարեփոխելուն նպատակաուղղված փորձի փոխանակման ծրագրում: 2020թ. Հայաստանում Սլովակիայի դեսպանատան բացումը լրացուցիչ հնարավորություններ կարող է ստեղծել թե Հայաստան-ԵՄ համագործակցության, թե երկկողմ հարաբերությունների առումով՝ մասնավորապես պաշտոնական աջակցության ծրագրի շրջանակում համագործակցության համար:

Ըստ Ա.Դուլեբայի, Սլովակիայի տեսանկյունից ԱլԳ-ի հետագա զարգացման համար վտանգ են հանդիսանում ռուս-ուկրաինական հակամարտությունը (մասնավորապես Ուկրաինայի սահմանակից երկիր լինելու պարագայում): Ռուսաստանի վարած քաղաքականությունն առհասարակ ԱլԳ երկրներում բարեփոխումներ իրականացնելու խոչընդոտներից է համարվում: Այլ կարևոր խոչընդոտ է ԱլԳ երկրների քաղաքական ինստիտուտների և կառավարման համակարգի ոչ բավարար վիճակն, ինչպես նաև քաղաքական վերնախավերի թույլ քաղաքական կամքը և անհետևողականությունը: Միաժամանակ ԵՄ-ի մոտեցումները հաճախակի չափազանց տեխնիկական բնույթ ունեն՝ ԵՄ-ի մի շարք անդամների դրսևորած անհետևողական դիրքորոշման պայմաններում: Սլովակիան նաև բավարար չի համարում ԱլԳ երկրների դիմակայունության վերաբերյալ առկա մոտեցումը՝ անհրաժեշտ համարելով համագործակցության ընդլայնումը նման ցանկություն ու քաղաքական կամք դրսևորող երկրների հետ:

Բացի այդ, Ա.Դուլեբայի կարծիքով, չնայած առկա տնտեսական անկմանը, համավարակը կարող է որոշ չափով նպաստել ԵՄ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրեր ունեցող ԱլԳ երկրներում ներդրումներին, քանի որ ԵՄ-ում մի շարք ընկերություններ շահագրգռված կլինեն որոշ արտադրություններ ասիական երկրներից տեղափոխելու հնարավորությամբ:

## *Հայացք Հունգարիայից*

Ըստ հուլիսի 24-ի սեմինարում<sup>18</sup> զեկույցով հանդես եկած Անդրաշ Ռացի, Հունգարիայի քաղաքականությունը մեծապես պայմանավորված է պատմական իրողություններով, նախ և առաջ Առաջին աշխարհամարտից հետո տարածքներ կորցնելով, ինչի արդյունքում մեծաքանակ հունգարացիներ սահմանակից երկրների քաղաքացիներ դարձան: Դրանով պայմանավորված, ԱլԳ երկրներից Ուկրաինան առանձնահատուկ տեղ է զբաղեցնում. Հունգարիայի քաղաքականությունը կենտրոնացած է այդ երկրի Չակարպատյա մարզում հունգարական փոքրամասնության խնդիրների վրա՝ նույն կերպ, ինչպես այլ հունգարական համայնքների վրա, և այս կամ այն երկրի հետ համերաշխությունն առաջին հերթին պայմանավորված է հունգարական համայնքի առկայությամբ ու կարգավիճակով: ԱլԳ մյուս երկրներում հունգարական փոքրամասնությունների բացակայությունը այդ երկրների նկատմամբ հետաքրքրության պակասի հիմնական պատճառն է: Մոլդովան թերևս բացառություն է, բայց այդ երկրին հատկացվող զգալի ֆինանսական և այլ օժանդակությունը որոշ չափով քարոզչական կամ իմիջային բնույթ ունի՝ Տրանսիլվանիայում հունգարական փոքրամասնության կարգավիճակի հետ կապված Ռումինիայի հետ շարունակական վեճերի ֆոնին:

ԱլԳ երկրների հետ ընդհանուր անցյալ ունենալու ընկալումը նաև ավելի թույլ է, քան Լեհաստանում, Չեխիայում ու Սլովակիայում՝ անգամ հաշվի առնելով Վարշավյան պայմանագրին նախկին անդամակցությունն ու ԽՍՀՄ-ի հետ ունեցած այլ կապերը: Միաժամանակ հունգարական քաղաքական բառապաշարում, ի տարբերություն լեհականի, չեխականի ու սլովակականի, «արևելք» և «արևելյան հարևանություն» հասկացությունները բավականաչափ լրոգված են. արևելքը սկսվում է Հունգարիայի ներկայիս սահմանից, կամ նաև Ուկրաինայի Չակարպատյա մարզը ներառող Կարպատյան լեռների տարածաշրջանից այն կողմ՝ ձգվելով մինչև Հեռավոր Արևելք, ինչպես նաև ներառում է Մերձավոր Արևելքը՝ Մադրիբը ներառյալ: Այդուհանդերձ, Ռուսաստանն ավանդաբար արևելքի մաս չի համարվում ու առանձին է դիտարկվում թե քաղաքական, թե գիտական շրջանակների կողմից: Դրան ավելացել է 2010 թ. վարչապետ Վիկտոր Օրբանի բարձրաձայնած «արևելքից փչող քամու» գաղափարը. այն ենթադրում է Չինաստանի, Թուրքիայի, որոշ արաբական երկրների, նաև Կենտրոնական Ասիայի նավթով հարուստ երկրների ու Ադրբեջանի հետ համագործակցության զարգացումը՝ պայմանավորված ներդրումներ կամ վարկեր ստանալու հնարավորություններով: ԱլԳ երկրների հետ հարաբերությունների ընդլայնման նկատմամբ զգուշավորությունը պայմանավորված է նաև Ռուսաստանի հետ լավ հարաբերությունների պահպանումն առաջնահերթություն համարելով (սա տնտեսական պրագմատիզմից բացի մասամբ պայմանավորված է Վ.Օրբանի հռետորաբանությունում Ռուսաստանը, ինչպես նաև Չինաստանն ու Թուրքիան

<sup>18</sup> «Արևելյան գործընկերություն. հայացք Հունգարիայից» սեմինար, 24 հուլիսի 2020թ., <https://www.youtube.com/watch?v=W4LIGIuIw1s>:

օրինակելի «ոչ լիբերալ ժողովրդավարության» մոդելներ ներկայացնելով – Ա.Գ.): Սակայն 2020թ. ընդունված Հունգարիայի ազգային անվտանգության ռազմավարությունում Ռուսաստանն առաջին անգամ հիշատակվել է որպես անկայունության աղբյուր՝ ՆԱՏՕ-ի ընդհանուր մոտեցմանը համապատասխան:

Այսուհանդերձ, Հունգարիան որոշ չափով ներգրավված է ԱլԳ երկրներում բարեփոխումներին օժանդակելուն նպատակաուղղված ծրագրերում՝ ելնելով համերաշխության մասին իր պատկերացումներից. հետկոմունիստական անցումային շրջանի փորձի փոխանակումն առանցքային է համարվում՝ առաջին հերթին կայունության և օրենքի գերակայության ապահովման նպատակով: Այս համատեքստում բավականաչափ կարևորվում են կրթական ծրագրերը և մասնագիտական վերապատրաստման օժանդակելը: Բացի այդ, ԱլԳ-ի նկատմամբ նախաձեռնողականությունից խուսափելով հանդերձ, Հունգարիան կողմ է Ասոցացման ու ազատ առևտրի պայմանագրերով, և այդ համատեքստում նաև Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը, ու նաև լիովին համամիտ է ԱլԳ-ի հետ Վիշեգրադյան քառյակի համագործակցության ընդլայնման հնարավորության հետ:

Ադրբեջանի հետ կապերը մշտապես կարևորվել են գազի մատակարարման և ներդրումների ու վարկերի ստացման հնարավորության տեսանկյունից, և վերջինիս հետ կապված հիասթափության պայմաններում որոշ չափով պակաս ինտենսիվ են դարձել: Բելառուսի հետ Հունգարիայի հարաբերություններն էլ բավականին զարգացել են 2014թ. սկսած՝ պայմանավորված Եվրասիական միության շուկայում հունգարական ներկայությունն ընդլայնելու ձգտմամբ, ինչը մասնավորապես հանգեցրել է Բելառուսում կատարվող ներդրումների աճին. կապերի զարգացմանը նաև նպաստել է այն, որ Հունգարիան, ի տարբերություն ԵՄ-ի ու Վիշեգրադյան քառյակի այլ անդամների, «պրագմատիկ» մոտեցում է դրսևորում և ժողովրդավարության զարգացումն առաջնահերթություն կամ հարաբերությունների զարգացման նախապայման չի համարում՝ ավելի հարմար գործընկեր հանդիսանալով բռնապետական վարչակարգի համար:

Վերջապես, անդրադառնալով հունիսին կայացած ԵՄ-ի և ԱլԳ երկրների արտգործնախարարների տեսակոնֆերանսին, կարելի է նշել հունգարական կողմի դիրքորոշման հետևյալ առանձնահատկությունները. ԱլԳ-ն կարևորվում է մասնավորապես համավարակի հետևանքները հաղթահարելու, այդ թվում, ըստ նախարար Պետեր Սիյարտոյի, «նոր աշխարհակարգի ստեղծման» ընթացքում: Ուկրաինայում հունգարական փոքրամասնության խնդիրներն ավանդաբար առաջնահերթություն համարելով հանդերձ, հիշատակվել է Մոլդովային ԵՄ-ի խոստացած ֆինանսական օժանդակությունը տրամադրելու, Ադրբեջանի հետ համապարփակ համագործակցության պայմանագիր կնքելու անհրաժեշտությունը՝ դեպի Եվրոպա գազի արտահանման ծավալի աճը հաշվի առնելով, ինչպես նաև

Վրաստանի ՆԱՏՕ-ին անդամակցությանը չխոչընդոտելու մասին:<sup>19</sup> Վերջինիս մասին հիշատակվել է նաև հուլիսի 6-ին Թբիլիսիում կայացած Պ.Սիյարտոյի և Վրաստանի արտգործնախարար Դավիթ Չալկալիանիի համատեղ մամլո ասուլիսի ընթացքում. ըստ Պ.Սիյարտոյի «Վրաստանն արժանի է ՆԱՏՕ-ի անդամակցության գործողությունների պլան ստանալուն»:<sup>20</sup> Կարելի է նշել, որ հաշվի առնելով Վ.Օրբանի կառավարության Ռուսաստանի հետ հարաբերությունների որոշ առանձնահատկություններ, այդպիսի հայտարարություններն, այնուամենայնիվ, կարող են Հունգարիայի կառավարության կողմից անվտանգ ու Վրաստանին սիրաշահելու համար նպատակահարմար համարվել, հաշվի առնելով, որ Գերմանիայի և Ֆրանսիայի դիրքորոշումը բացառում է կարճաժամկետ հեռանկարում Վրաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին:

### *Ամփոփում*

Չնայած կորոնավիրուսի համավարակի և որոշ այլ պատճառներով տեղի ունեցող առաջնահերթությունների վերանայմանը, ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացումը հեռանկարային է ոչ միայն Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով առաջնահերթություն համարվող ոլորտներում: Մասնավորապես, Վիշեգրադյան քառյակի երկրների հետ երկկողմ և այլ ձևաչափերով հարաբերությունների զարգացման հնարավորություններ առկա են քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, գիտատեխնիկական, մշակութային ու այլ ոլորտներում: Որոշ առանձնահատկություններ հաշվի առնելով, կարելի է նաև ենթադրել, որ մի շարք խնդիրների շուրջ Վիշեգրադյան քառյակի երկրների հետ հնարավոր է հասնել փոխըմբռնման ավելի բարձր մակարդակի, քան որոշ արևմտաեվրոպական երկրների հետ: Սա կարող է ստեղծել լրացուցիչ հնարավորություններ, որոնք արժանի են ուշադրության և ուսումնասիրության՝ հետագա գործնական քայլերի ակնկալիքով:

---

<sup>19</sup> «The Eastern Partnership is important in the new world order» հոդվածը Հունգարիայի կառավարության կայքում, 12 հունիսի 2020 թ., <https://www.kormany.hu/en/ministry-of-foreign-affairs-and-trade/news/the-eastern-partnership-is-important-in-the-new-world-order>:

<sup>20</sup> MTI-Hungary Today, «Eastern Partnership Among EU's Most Important Policies, says Foreign Minister Szijjártó», 6 հուլիսի 2020 թ., <https://hungarytoday.hu/szijarto-eastern-partnership-georgia/>: